ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 12, 1951 Общественные науки

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

Ա. Խաչիկյան

1280 ԹՎԱԿԱՆԻՆ ԵՐԶՆԿԱՅՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ «ԵՂԲԱՅՐՈՒԹՅՈՒՆԸ»

Միջնադարյան Հայաստանի քաղաքների ներքին կյանքի մասին հայ պատմագիրների աշխատություններում կան միայն պատահական ու անորոշ ակնարկներ։ Դրանց միջոցով անհնար է քիչ թե շատ բավարար պատկերացում ունենալ այդ քաղաքների և շրջակա գյուղերի միջև գոյություն ունեցող ամենօրյա տնտեսական կապերի, քաղաքային բնակչության դասակարգային շերտավորման, առևտրա-արհեստավորական շերտերի և ֆեոդալական վերնախավի միջև տեղի ունեցող բախումների, քաղաքային ինքնավարության մարմինների, նրանց իրավունքների ու սոցիալական կազմի և բազմաթիվ այլ հարցերի մասին։

Բարեբախտաբար մեր Մատենադարանում կան մինչ այժմ պատշաճ ուշադրություն չգրաված ձեռագիր սկզբնաղբյուրներ (խոսքը վերաբերում է XII—XV դարերում գրված Քարոզգրքերին, մեկնողական գրվածքներին և Կանոնգրքերին), որոնք պարունակում են վերոհիշյալ հարցերի լուսաբանմանը նպաստող ուշագրավ նյութեր։

Այդ նյութերը հնարավորություն են տալիս հետևելու դասակարգային հարատև այն պայքարին, որ մղվում էր քաղաքային բնակչության լայն խավերի և երկրի օտար ու տեղական ֆեոդալ իշխողների միջև՝ մի կողմից և հակաֆեոդալական օպոզիցիայի բաղկացուցիչ շերտերի միջև՝ մյուս կողմից։

Տնտեսական ու սոցիալական հողի վրա բախվում էին արտադրող արհեստավորների շահերը մի խումբ մեծատուն առևտրականների շահերին, որովհետև վերջիններս, հանդես գալով որպես պատվիրատուներ և տերը լինելով արտադրվող ապրանքի հում նյութին ու իրացնելով արտադրանքի վաճառքը հեռավոր շուկաներում՝ շահագործում էին արհեստավորների աշխատանքը։ Բախվում էին նաև հմուտ արհեստավոր վարպետների շահերը «գործավորների» (ենթավարպետներ) և «աշակերտների» շահերին, որովհետև վերջիններս՝ արտադրական գործիքներ չունենալով և կաշկանդված լինելով գոյություն ունեցող օրենքներով ու սովորույթներով, զրկված էին ինքնուրույն կերպով արտադրելու հնարավորությունից։ Քաղաքային բնակչության ամենաստորին աստիճանի վրա էին գտնվում իրավազուրկ մշակները, որոնց շարքերն օր ավուր լրացնում էին ճորտական լծից ազատվել տենչացող գյուղացիներով։

Քաղաքային բնակչության մի փոքր մասը միայն անց էր կացնում իր օրը կեր ու խումի, երգ ու պարի և շռայլության մեջ, իսկ մյուս՝ մեծագույն մասին վիճակված էր դառն ու տաժանակիր աշխատանքը և զրկանքներով ու տառապանքներով լի առօրյան։

Դիտող ու կշռադատող ժամանակակիցների համար պարզ էր, որ «Ի չքաւորութենէ աղքատի և յառատութենէ մեծատան, ի մէջ ժողովրդեան ծնանի երկպառակութիւն»[1]

Ահա, այդ հարատև ու անդադրում «երկպառակության», այսինքն սոցիալ-տնտեսական շահերի ամենօրյա բախումների ընթացքում քաղաքի աշխատավոր շերտերը աստիճանաբար հասունանում էին ավելի կազմակերպված դասակարգային պայքարի։ Քաղաքներում ստեղծվում են առևտրական ու արհեստավորական «եղբայրություններ», որոնք միավորելով նույն զբաղմունքի կամ նույն սոցիալ-տնտեսական գոյավիճակի մարդկանց՝ կարևոր դեր են խաղում երկրի տնտեսական ու քաղաքական կյանքում։

Այդ «եղբայրությունների» գոյության ու էության հարցը պարզելու տեսակետից բացառիկ արժեք են ներկայացնում Մատենադարանի ձեռագրերից մեզ հայտնի դարձած «Սահմանք և կանոնք միաբանութեան եղբարց...» խորագրով կանոնները, որոնք վերաբերում են Երզնկա քաղաքին։[2]

---

1 *Մատենադարան, ձեռագիր № 677, էջ 254։*

2 *Երզնկայի եղբայրության «Սահմանքի» բնագիրը պահպանվել է Մատենադարանի երկու (№№ 2329 և 652) ձեռագրերում։*

№ 2329 ձեռագիրը բովանդակությամբ քնարականական, խրատական ու կանոնական նյութերի ժողովածու է. բաղկացած 303 թղթի թեր-

* * *

XII—XIV դարերի Հայաստանի քաղաքների մեջ, որպես միջազգային առևտրի կարևորագույն հանգուցակետ և արհեստագործության կենտրոն, ուրույն տեղ է գրավում Երզնկան։

Գտնվելով Արևելքը Արևմտյան Եվրոպայի երկրների և Ռուսաստանի հարավային շրջանների հետ կապող կարևորագույն երկու ուղիների վրա, նա մասնակցում էր միջազգային առևտրին թե՛ որպես Թավրիզ—Այաս քանուկ մագիստրալի օղակներից մեկը և թե՛ որպես Տրապիզոնի ցամաքային մատույցը։ Այսպիսով, Երզնկայի առևտրականները սերտ կապերի մեջ էին Կիլիկյան նավահանգիստների, Տրապիզոնի, Ղրիմի, ինչպես և Իրանի ու Հայաստանի վաճառաշահ քաղաքների՝ հատկապես Թավրիզի ու Անիի հետ։

XII—XV դարերում Երզնկա այցելած ճանապարհորդները խոսում են նրա մասին, որպես «հայաբնակ», «ընտիր», «մեծ ու շեն» քաղաքի, գովում են Երզնկայի ճարտար մանածագործներին, որոնք հյուսում են «աշխարհի լավագույն բեհեզները» (Մարկո-Պոլո) կամ «իր անունով կոչվող գեղեցիկ կերպասները», վկայում են այն մասին, որ այնտեղ կան «լավ կարգավորված շուկաներ», զարմանում են քաղաքում արտադրվող պղնձե ամանների և հատկապես զարդարուն աշտանակների արվեստով և հայտնում են, որ քաղաքի վերոհիշյալ արտադրանքը մեծ հռչակ ունի հեռավոր շուկաներում (Իբն-Բատուտա)։

Արաբ աշխարհագիր Յակուտին, իր «Աշխարհագրական բառարանում» Արզանչան (Երզնկա) անվան դիմաց գրում է. «Այն գեղեցիկ և համբավավոր քաղաք է, շատ հաճոյալի և բարիքներով լի»։ Երզնկան ճանապարհորդների ուշադրությունն է գրավում նաև հետագա՝ XV դարում։

Իսպանացի Կլավիխոն (ճանապարհորդել է 1403—06 թթ.) հայտնում է, որ «շրջապատի բոլոր կողմերից կարելի է տեսնել գյուղեր՝ որթատունկերով և բուսականությամբ. ամբողջ դաշտում մշակվում էր որթատունկ և հացահատիկ...։ Քաղաքը շատ բազմամարդ է և այնտեղ կարելի է տեսնել շատ գեղեցիկ փողոցներ ու հրապարակներ։ Այնտեղ բնակվում են պաշտոնական մեծաթիվ անձինք, որոնց մեծագույն մասը հարուստ մարդիկ են, կան նաև մեծափարթամ վաճառականներ»։

Վստահելի տվյալներ են հասել մեզ նաև Երզնկայի ճարտարարվեստ ոսկերիչների, արծաթագործների ու շինարարների մասին (Հայապատում, Բ. 480, Կ. Երզնկացի, էջ 96 և այլն), ինչպես նաև այն մասին, որ Երզնկայի շրջակայքում բացի խաղողից, մրգածառերից ու հացահատիկից, մշակում էին նաև բամբակ։[1]

Առկա աղբյուրները հնարավորություն են տալիս մերձավորապես որոշելու նաև Երզնկայի բնակչության թիվը։ Ըստ ամենահամեստ հաշվարկի, XIII—XV դարերում քաղաքն ունեցել է 18.000-ից ոչ պակաս բնակիչ (ամենայն հավանականությամբ 40—50 հազար)։[2]

Պարբերաբար կրկնվող կործանարար երկրաշարժերն ու բազմաթիվ արշավանքներն ու ասպատակությունները, որին ենթարկվել է Երզնկան նշված դարերում, հասցրել են նրան ծանր վերքեր, սակայն ժամանակավորապես են միայն խանգարել քաղաքի նորմալ կյանքը։ Քաղաքը, շնորհիվ իր բնակչության տոկունության և բարենպաստ դիրքի, շուտով բուժել է իր վերքերը և ողջ միջնադարի ընթացքում շարունակել է խաղալ կարևոր դեր Փոքր Ասիայի տնտեսական ու կուլտուրական կյանքում։

1280 թվականին Երզնկայում տեղի է ունենում կարևոր մի իրադարձություն, ստեղծվում

թերից, ընդօրինակված է Երզնկայում 1291 թվականին։ «Սահմանքիս» բնագիրը գտնվում է ձեռագրի 287բ—295ա էջերում։

Երկրորդ ձեռագիրը Մատենադարանի № 652 կանոնական ու խրատական նյութերի ժողովածուն է։ Բաղկացած է 132 թղթի թերթերից, ընդօրինակված է ԺԵ—ԺԶ դարում Գրիգոր կրոնավորի կողմից Հակոբ եպիսկոպոսի համար։ «Սահմանքիս» բնագիրը գտնվում է ձեռագրի 70բ—75բ էջերում։

[1] Այս տեղեկության հեղինակը 17-րդ դարի կեսի նշանավոր տեղագիր Հակոբ Կարնեցին է, նա գրում է. «Եւ ունի (երկիրն Եկեղեաց) քաղաք մեծ՝ զԵրզնկայ, որ լի է ամենայն բարութեամբ, բամբակօք, այգեստանօք և մրգաբեր ծառօքս (Տեղագիր Վերին Հայոց, 1903, էջ 11—12)։

[2] Բնակչության մերձավոր թիվը որոշելիս ի նկատի ենք ունեցել Երզնկայի երկրաշարժերի մասին մեզ հասած հետևյալ վստահելի տվյալները։

1255 թվականից մի քանի տարի առաջ տեղի ունեցած երկրաշարժից, ինչպես հաղորդում է Ու. Ռուբրուքը, «Տասը հազար անունով մարդիկ կորած էին, ի բաց առեալ աղքատներից, որոնց մասին արձանագրություն չկար» (տես «Ուղեգրություններ», հտ. Ա., էջ 24)։ Պակաս չի եղել զոհերի թիվը նաև 1268 թվականի երկրաշարժից։ 1458 թ. երկրաշարժի մա-

է, ինչ-որ «Եղբայրութիւն»։ Գրիգոր Սանահնեցի անունով մի ծերունի վարդապետ կարգվում է այդ եղբայրության գլուխ, իսկ Հովհան Երզնկացի նշանավոր վարդապետը գրում է այդ եղբայրության «Սահմանք և կանոնքը»։

* * *

Մեր միջնադարյան քաղաքների ներքին կյանքի ուսումնասիրման համար մեծ արժեք ներկայացնող այս կանոնների մասին, որքան մեզ հայտնի է, թռուցիկ հիշատակություն ունի միայն Ղ. Ալիշանը «Երզնկա և Յովհաննես Երզնկացի» խորագրով իր հոդվածում։ («Յուշիկք հայրենեաց Հայոց», հատոր երկրորդ, Բ. տպ., Վենետիկ, 1921, էջ 416)։ Նա հայտնում է, որ 1280 թվին սուրբ Գրիգոր վանքի միաբանները նորոգեցին իրենց միաբանությունը և խնդրեցին Հովհան Երզնկացուն գրել իրենց համար կանոններ։ Վերջինս կատարելով նրանց խնդիրը, դրեց «Կանոնք և Սահմանք միաբանութեան եղբարց...» վերնագրով կանոնախումբը։ Ալիշանն անշուշտ թյուրիմացության մեջ է։ Կանոնախմբի բովանդակության նման շփոթություն կարող էր առաջանալ, եթե ենթադրենք, թե նա ձեռքի տակ ունեցել է նույն Հովհան Երզնկացու մի այլ աշխատությունը, որի վերնագիրը («Յաղագս միաբանութեան եղբարց, բանք սակաւ և պիտանիք՝ վկայութեամբ գրոց սրբոց, զորմէ թուղթ գրեցի սիրով եղբայրութեան այնոցիկ, որք ցանկան փափկանաւք բանից իմաստութեան»[1] փոքր ինչ նման է մեզ հետաքրքրող կանոնախմբի վերնագրին։

«Սահմանք և կանոնքը» բաղկացած է մի նախաբանից և երեք գլուխներից։

Նախաբանում ասված է, որ մարդկանց համար գոյություն ունի կյանքի և վարքի երկու ճանապարհ. մեկն այն է, որ սուրբ հոգու առաջնորդությամբ տանում է դեպի հանդերձյալ երջանիկ կյանք, մյուսը, որ լայն է ու ընդարձակ և գտնվում է սատանայի առաջնորդության ներքո, տանում է դեպի կորուստ։ Շատերն են գնում այս երկրորդ ճանապարհով։ Երզնկայի եղբայրությանը պետք է առաջնորդի սուրբ հոգին դեպի «յերկիր ուղիղ բարի ճանապարհաւն»։

Ապա, հեղինակը հայտնում է, թե չորս տարբեր տեսակի եղբայրություններ գոյություն ունեն։ Եղբայր են կոչվում, նախ, բոլոր մարդիկ միմյանց նկատմամբ. երկրորդ, եղբայր են միևնույն ծնողների զավակները, երրորդ, բոլոր քրիստոնյաները, մկրտվելով միևնույն ավազանում, և լինելով «Քրիստոսի և երկնաւոր հաւրն որդիք», դառնում են եղբայրներ։

Այլ է Երզնկայի եղբայրությունը։

«Այլ դուք,— գրում է Հովհան Երզնկացին,— ի վերայ այսոցիկ չորրորդ տեսակք եղբայրութեան հաստատեցէք ի միջի ձերում, որ գրովն է, և կանոնական սահմանաւք, և բարեսէր ժողովմամբ, և ընկերակցութեամբք, և միաբանու-

սին մի հիշատակագիր հայտնում է հետևյալը. «Եկաւ անագին շարժ և աւերեաց զբոլոր մայրաքաղաքն յԵզնկայ, և երկոտասան հազար այր և կին ի ներքոյ հողին մնացին» (ձեռագիր № 1309, էջ 261ա)։ 1483 թ. երկրաշարժի մասին Մատենադարանի ձեռագիր ավետարաններից մեկի ստացող Հոհաննեսը գրում է. «Վասն ծովացեալ մեղաց իմոց Երզընկա քաղաք տապալեցաւ և ԺԸՌ (18.000) ոգի ի ներքև հողու մնաց, և այլ ոչ մնաց մի կենդանի» (Ձեռագիր № 6879, էջ 364ա)։ Քաղաքի կործանարար երկրաշարժերի մասին Երզնկայի բանաստեղծները աղեկտուր ողբեր են հորինել։ Դրանցից Ղուլ-օղլի Երզնկացին գրում է, որ երկրաշարժից «...Տասն հազար հոգի մեռան

Հայ ու հոռոմ ու մուսուրման

Մայրաքաղաքն աւիրեցաւ» (Ձեռագիր № 7709, էջ 108բ)։

Թորոս Երզնկացին, հավանորեն նույն շարժի մասին գրած իր ողբի մեջ ունի հետևյալ տողերը.

«...Անասելի մարդ կոտորեց

Ներս, որ թուաւ՝ տասն հազար.

Շատ մի սպաննեց մեծ խոճանին...

Շատ հիմէրպանտ փէշաքէրներ» (Ձեռագիր № 9271, էջ 108ա)։

Կան նաև այլ վկայություններ (տես, օրինակ, «Պատմութիւն Առաքելի Դաւրիժեցւոյ», Վաղարշապատ, 1884, գլուխ ԾԵ, էջ 481, 482, 486 և այլն), բայց սահմանափակվենք բերածով։ Տվյալներից ոչ մեկում շարժից զոհված երզնկացիների թիվը 10.000-ից պակաս չի ցույց տրված։ Իսկ 1483 թ. երկրաշարժի մասին խոսող ժամանակակիցը, հայտնելով, որ զոհերի քանակն էր 18.000, ավելացնում է, թե այլևս մարդ չմնաց կենդանի։

Ճիշտ է, այդ դարերում հազիվ թե քաղաքներն ունենային մանրամասն ու ճշգրիտ տվյալներ իրենց բնակչության մասին, այնուամենայնիվ, կարծում ենք, որ ժամանակակիցները առասպելական չափազանցություններ իրենց տված զոհերի մասին չէին կարող գրել, ուստի և հավանական ենք գտնում, որ Երզնկան XIII—XV դարերում ունեցել է ոչ պակաս քան 40—50 հազար բնակչություն։

[1] Մատենադարան, ձեռագիր № 798, էջ 54բ—84ա։

թեամբ, և միով հաւատով և սիրով, և երկնաւոր ցանկութեամբ»։

Այս նախարանից հետո շարադրված են եղբայրության կանոնները, բաղկացած երեք գլուխներից։

Առաջին գլխով սահմանված են այն կանոնները, որոնք վերաբերում են «եղբայրության» անդամներից ամեն մեկի բարոյական կերպարին և անձնական կյանքին («Եթէ ամենայն ոք իւր անձամբն որպէս քաղաքավարի»)։

Միաբանության անդամները պարտավոր են սիրել աստծուն, հնազանդվել և խնամել իրենց ծնողներին, պատվել և իրենց վաստակից «պտուղ» տալ քահանաներին, մինչև ամուսնությունը «անարատ կուսությամբ» մնալ, ամուսնանալուց հետո հեռու կենալ «յօտար և ի պիղծ անգողնոյ», ամեն օր երեք անգամ աղոթել, շաբաթ և կիրակի օրերին անպատճառ գնալ եկեղեցի և ներկա լինել պատարագին, խոստովանել հանցանքը, հաղորդվել, լինել աշխատասեր, աղքատներին ողորմություն տալ և այլն։

Այս գլուխը «Եղբայրության» նպատակներն ու էությունը պարզելու տեսակետից քիչ նյութ է տալիս։ Ակնհայտ է, որ Հովհան Երզնկացին, որպես հայ եկեղեցու ճանաչված իդեոլոգներից մեկը, մասնակցություն է ունեցել այս «Եղբայրության» համար «Սահմանք և կանոնք» ստեղծելու գործին սոսկ այն նպատակով, որ միաբանության մեջ մտնող «տղայահասակ մանկանց» աշխարհիկ ձգտումները սանձահարի, նրանց միաբանությանը տա «կրոնական միաբանության» երանգ։

Այնուամենայնիվ այս կանոնների հիման վրա հնարավոր է մի քանի կարևոր հարցեր պարզել։

Պարզվում է նախ, որ միաբանության մեջ ընդգրկվածները, եթե ոչ գերազանցապես, ապա իրենց մեծամասնությամբ, երիտասարդ մարդիկ են։ «Սահմանքի» հեղինակը նրանց դիմում է հետևյալ խոսքերով. «Վուարուք երիտասարդք և տղայահասակ մանդունք, որք միաբանիք եղբայրութիւնս»։

Զ (6-րդ) կանոնից, ուր սահմանված են աղոթքի ու ծնրադրության ժամերը և՛ տղամարդկանց և՛ կանանց համար, հնարավոր է ենթադրել, որ «Եղբայրության» դռները փակ չեն եղել կանանց առաջ։

Ավելի հետաքրքիր ու բովանդակալից է «Սահմանքի» երկրորդ գլուխը, ուր շոշափված են այն հարցերը «Թէ զինչ օգնութիւն և շահ արասցեն միմեանց այս միաբանեալ եղբարքս և որ է պտուղ միաբանութեան սոցա»։

«Եղբայրների» միմյանց հանդեպ ունեցած պարտավորություններից առաջինն է միասնական ջանքերով օգնել և ազատել այն «եղբորը», որը «ի փորձութիւն մարգկան անդանիցի և բռնաւորաց նեղիցի»։ Եթե որևէ մեկը մեղքի մեջ թաթախվի, եղբայրները հնարավոր միջոցներով (աղոթք, խրատ, հանդիմանություն, արգելման հրաման) պիտի ձգտեն ազատել նրան սատանայի ծառայությունից. աղքատության մեջ ընկնողին, ըստ իրենց կարողության, պարտավոր են օգնել բոլոր «եղբայրները», հիվանդին պարտավոր են մխիթարել այցելությամբ, գեղով և բժշկով, հանգուցյալի թաղման նույնպես մասնակցելու են բոլորը, ըստ որում, յուրաքանչյուրը պարտավոր է իր միջոցներով մեկ օր պատարագ անել հանուն վախճանվածի։

Այս երկրորդ գլխի հոդվածներից պարզվում է նախ, որ «Եղբայրության» հիմնական նպատակը փոխօգնությունն է, ամենօրյա համագործակցությունը և միասնական պայքարն ընդդեմ «բռնաւորաց», ընդդեմ «չար մարգկան»։

Երրորդ գլխում շարադրված են այն հոդվածները, որոնք վերաբերում են ուրիշ վայրերից եկողների հանդեպ «եղբայրների» պարտավորություններին։ Նրանք պետք է հյուրընկալեն, պատվեն և օգտակար լինեն այլ վայրերից եկած վարդապետներին և օտարականներին։

«Սահմանքի» վերջում Երզնկացին գիմում է «եղբայրներին» և ասում, որ առաջնորդվելով իր կողմից շարադրված սկզբունքներով, նրանք կնմանվեն ամուր պարսպի.

«Զի որպէս բազմութիւն քարանց,— ասում է նա,— ժողովեալ ի մի տեղի պարիսպ ամրութեան և պահապան ամուր է քաղաքի, այսպէս և դուք իբրև զկենդանի քարինս սիրովն աստուծոյ մածեալ՝ անառիկ ամրութեամբ կացէք ի հաստատութիւն»։

Հայտնում է նաև, որ «եղբայրության» անդամը պարտավոր է ենթարկվել և կատարել «Սահմանքի» կետերը։ Աններելի հանցանք գործողները վտարվելու են միաբանությունից։

Վերջում պարզվում է, որ «Եղբայրության» մեջ եղել են «կր(տյսերներ» և «աւագներ»։ «Եղբայրությունն» ունեցել է իր պաշտոնեությունը՝ «Տասին գլուխն», «Քառասունին մեծն», «Գլխաւորք եղբարցն» և «Գլուխ եղբայրութեանն»։

Այսպիսով՝ «Սահմանք»-ի ուսումնասիրությամբ որոշակի է դառնում, որ 1280 թ. Երզնկա քաղաքում ստեղծված «Եղբայրությունը» եղել է քաղաքային աշխատավորական շերտերի՝ հատկապես «երիտասարդների» և «տղայահասակ մանկանց» ընդգրկող ու շաղկապող մի կազմակերպություն։

«Ասասին գլուխ» տերմինը հնարավորություն է տալիս վստահորեն դատելու, որ կազմակերպության ստորին օղակում միավորվել են «եղբայրության» տասը անդամներ, ունենալով իրենց գլուխ տասնապետը։ Մեկ տասնյակ անձերից բաղկացած 4 այսպիսի օղակներ միավորվել են «Քառասունին մեծի» հրամանատարության ներքո։

Կազմակերպչական նման, եթե կարելի է ասել զինվորական սկզբունքը հնարավոր կլիներ կիրառել միայն այն դեպքում, երբ «Եղբայրությունը» լիներ բաղաքային աշխատավորական լայն շերտերը միավորող կազմակերպություն անմիջաբար առնչված չլինելով այս կամ այն արհեստի կամ առևտրի մասնահյուղի հետ։

Իսկ որ այն միավորվել է գերազանցապես բաղաքի աշխատավորական շերտերին, այդ պարզ երևում է «Սահմանքի» այն հոդվածներից, որոնք վերաբերում են միմյանց հանդեպ «եղբայրների» ունեցած պարտավորություններին (օգնել աղբատ եղբորը, այցելել և բուժել հիվանդին, կազմակերպել մահացածի թաղումը և այլն և այլն)։ Կազմակերպությունը ղեկավարվել է «Գլխաւորք եղբարց» կոչվող օրգանի կողմից, որի ավագ անդամը՝ «Գլուխ հղբայրության»-ը, եթե ոչ որպես կանոն, ապա 1280 թվին եղել է հոգևորական։ Ըստ երևույթին նրա ֆունկցիան է եղել հսկել «Եղբայրության» կրոնա-բարոյական սկզբունքներին և սանձահարել «միաբանեալ մանկանց» աշխարհիկ ձգտումները։

«Եղբարց միաբանության» մեջ եղել են «ասագ» և «կրտսեր» անդամներ։ Ըստ որում «Սահմանքի» տվյալներով ավագ եղբայրը պարտավոր է եղել քաղցրությամբ խրատել կրտսերին, իսկ վերջինս՝ հնազանդությամբ լսել ավագին։

«Ավագների» ու «կրտսերների» տարիքային տարբերությունը պարզ է, սակայն այս ստիճանավորումը, թվում է, արդյունք է ոչ միայն անդամների ծերության ու երիտասարդության։ Միջնադարյան համքարական կազմակերպությունների կյանքում սերտ աղերս գոյություն ուներ աշխատողի տարիքի և սոցիալ-տնտեսական դրության հետ։ Աշակերտները ուսման որոշված ժամանակաշրջանն անցկացնելուց հետո, սովորաբար, իրավունք էին ստանում ինքնուրույն կերպով արհեստով զբաղվելու, կամ դառնում էին ենթավարպետ, չկորցնելով հետագայում, որոշ կուտակումներ անելուց հետո, սեփական արհեստանոց ունենալու երազանքը։

Նրանց շահերը բախվում էին վարպետների շահերին, որոնք նրանց անմիջական շահագործողներն էին, և այս հողի վրա հաճախակի տեղի էին ունենում ընդհարումներ նրանց միջև։ Սակայն նրանք ավելի հաճախ պայքարի էին դուրս գալիս բաղաքի ֆեոդալական տերերի և մեծատուն վաճառականների դեմ՝ դաշնակցելով իրենց վարպետներին։

«Սահմանք»-ի տվյալներով՝ միաբանության հիմնական նպատակը միասնական պայքարն էր ընդդեմ բռնավորների, և տնտեսական փոխօգնությամբ ու համագործակցությամբ միմյանց զորավիգ ու նպաստամատույց լինելը։

«Վասն զի,— կարդում ենք «Սահմանքում»,— աշխարհս այս ծով է և մարդիկ ալեկոծին ի սմա պէս պէս պատահմամբ գործոց։ Եթէ ոք յեղբարութենէս ի փորձութիւն մարդկան անգանիցի և բռնաւորաց նեղիցի, ամենայն եղբայրքն ջան եղեալ հանցեն զնա ի հասանել վշտացն... եւ եթէ ոք յաղքատութիւն անգցի և ի չքաւորութիւն մարմնոյ՝ այլ եղբարքն ըստ կարողութեան և ըստ ուժոյ օգնեսցին...»։

Ցավոք, «Սահմանքի» հեղինակի հաղորդած տվյալները անբավարար են «եղբայրության» մասին ավելի լրիվ պատկերացում կազմելու համար։ Մի շարք կարևոր ու հետաքրքրաշարժ հարցեր, օրինակ՝ ի՞նչ բնույթ են կրել և ի՞նչ հարցեր են լուծվել «եղբայրների» հավաքույթներում, քաղաքի տնտեսական կյանքում ի՞նչ ֆունկցիա ու դեր են կատարել «Եղբայրության» ղեկավար մարմինները։ և նման մի շարք այլ հարցեր, մեր ձեռքի տակ եղած աղբյուրների տվյալներով առայժմ չեն ստանում իրենց լուծումը։

Վերոհիշյալ հարցերի լուսաբանմանը լայնորեն օժանդակելու են XIII դարում, մոնղոլական տիրակալության լծի խստացման ժամանակաշրջանում, Փոքր Ասիայի քաղաքներում առաջ եկած «ախի» («եղբայր») կազմակերպության մասին եղած վկայությունները։[1] «Ախիները» քարոզում էին եղբայրություն և արդարություն։ Իբն-Բատուտան, որ 1332 թ. ճանապարհորդելով Փոքր Ասիայում, հանդիպելով հյուրընկալվում էր «ախիների» (ի միջի այլոց նաև Երզնկայի «ախիների» կողմից), վկայում է, որ նրանք կանգնած էին ազատության պաշտպանության դիրքերում և ոչնչացնում էին բռնավորներին ու նրանց կամակատարներին։ Տառապյալներին ու չքավորներին օգնելը պար-

---

[1] «Ախի» կազմակերպության մասին տես *Вл. Гордлевский*, Из жизни цехов в Турции—К истории „ахи" (Записки Коллегии Востоковедов. II. вып. 2. Ленинград. 1927). *Вл. Гордлевский*, Государство Сельджукидов Малой Азии, Москва—Ленинград, 1941, *В. Бартольд*, Ислам, СПБ., 1918 և այլ աշխատություններ։

տաղիր էր նրանց համար։ Հայտնի է նաև, որ «ախիները» հիմնականում երիտասարդ ամուրի մարդիկ էին։

XIX—XX դարերի ազգագրական տվյալները միաբերան վկայում են այն մասին, որ Անդրկովկասի քաղաքների համքարական կազմակերպությունները միավորում էին նույն արհեստի մարդկանց՝ անկախ նրանց ազգային պատկանելիության և կրոնական դավանանքի։ Տիրող դասակարգերի ձգտումը՝ սերմանել ազգամիջյան ատելության ու կրոնական անհանդուրժողականության թույնը սոցիալ-տնտեսական նույն պայմանների մեջ գտնվող այլազգի աշխատավորության մեջ, հակահարված էր գտնում համքարական կազմակերպությունների կյանքի ու գործունեության բոլոր կարևոր բնագավառներում։

Կան վստահելի տվյալներ այն մասին, որ համքարական կազմակերպությունների այդ տրադիցիան նույնպես դարավոր պատմություն ունի։ Հայտնի է, որ «ախի» կազմակերպության մեջ ընդգրկվում էին նաև Փոքր Ասիայի քաղաքների քրիստոնյա աշխատավորների ներկայացուցիչները։ Ուշագրավ է այս առումով նաև այն փաստը, որ 1462 թվին Կտուց անապատում ընդօրինակված Հայսմավուրքի գրիչ խաչատուրը հիշատակություն ունի ձեռագրի ստացողի մեծ պապ «ախի Կարապետի» մասին (ձեռագիր № 4883, էջ 613բ)։

Երզնկայի «Եղբայրության» մեջ միաբանվածները նույնպես տոգորված են հարևան ժողովուրդների հետ հաշտ ու խաղաղ գործակցելու գաղափարով ու ջերմ ձգտմամբ։ «Եղբայրության» սահմանքի մեջ այդ առթիվ կարդում ենք.

«Եւ խաղաղասէրք լինին եղբարքս մեր ի մէջ աշխարհի, ընդ ամենայն ազգ մարդկան սիրով առնիցեն դասել և զլսել, որ յամենայն ազգէ իմաստունք լիցին՝ մեծարեսցին և յիմաստութենէն շահեսցին՝ առանց հակառակութեան»։

Համոզված ենք, որ «ախիների» (որոնցից շատ կային նաև Երզնկայում) և Սուղնկայի «եղբայրների» միջև եղել են մերձավոր կապեր։

Երզնկայի «Եղբարց միաբանությունը» «Սահմանքի» վստահելի տվյալով պաշտոնական բնույթ է ստացել և ճանաչվել է նկեղեցու կողմից որպես ընդունելի կազմակերպություն, 1280 թվականին։

Մեզ այժմ հետաքրքրում է կարևոր մի հարց. Երզնկայի այս «Եղբայրությունը» ունեցե՞լ է արդյոք իր նախորդները հայկական քաղաքներում և նման տիպի կազմակերպություններ եղե՞լ են արդյոք նաև հետագայում՝ բուն Հայաստանում և հայկական գաղութավայրերում։ Հասկանալի է, որ այս հարցերը մեծ կարևորություն ունեն միջնադարյան Հայաստանի քաղաքների սոցիալ-տնտեսական կյանքն ուսումնասիրելու տեսակետից. ցավոք, նրանց գոհացուցիչ պատասխան տալու համար առայժմ մենք զուրկ ենք հարուստ նյութերից։

Այնուամենայնիվ կան մատենագրական որոշ տվյալներ ու ակնարկներ, որոնց կողքով չի կարելի լռությամբ անցնել։

Մատթեոս Ուռհայեցին իր «Ժամանակագրության» մեջ[1] պատմում է «յառաջ քան զքսան ամս», այսինքն՝ 1120-ական թվականներին տեղի ունեցած մի շատ կարևոր դեպք։ Լսենք նրան.

«... Նոյնպէս յաւուրն բարեկենդանին և նոյն ամին եկեալ կարաւան ի յարևելից ի քաղաքն Անտիոք և բարձեալ բերէին տարեխ ձուկն, և կային ի մէջ շուկային ի գինարբութեան. և ի լսել քաղաքացեացն զձայն պարուց նոցա, ամենայն արք քաղաքին հասանէին ի վերայ նոցա և ծեծելով գանալից արարին զնոսա, սկսան հանել զնոսա ի քաղաքէն. էին արք իբրև ութսուն՝ բրէզածք և ընտրեալք քաջութեամբք։ Եւ յայնժամ ձայն տուեալ մանկտաւագն նոցա, և նոցա միաբան գիշեմխեալք էին՝ յարձակեցան ի վերայ քաղաքացեացն և ի Սևոտոյն դրանէն մինչև ի տէր-Պետրոս՝ զամենայն արք քաղաքին փախստական արարին, և կառափնաբեկ և ոտնակոտոր արարին արս բազումս. և ապա խաչիւ և աւետարանով երդուեալ նոցա բնաւ այլ ոչ մեղանչել նոցա։ Եւ յայնժամ արարին խաղաղութիւն և դարձան ի տեղիս իւրեանց»։

Անտիոք եկած վաճառականների բերած ապրանքը Վանա լճի ապխտած ձուկն է— տարեխը, ուստի առևտրականներն էլ Վասպուրականից են՝ ամենայն հավանականությամբ հենց Վան քաղաքից։ Կեր ու խում, երգ ու կին, ահա նրանց առօրյան օտար շուկաների հոուզևոի մեջ։ Նրանք կազմակերպված զինական ուժ են ներկայացնում, զինված են բբերով (այդ չի նշանակում թե այլ զենք չեն ունեցել), ունեն իրենց հրամանատարը, որ Ուռհայեցու կողմից կոչվում է «Մանկտաւագ», վերջինիս կոչով բոլորը, «որ էին արք իբրև ութսուն», մի մարդու նման ոտքի են կանգնում և հալածում իրենց ծեծողներին։ Նրանք հարյուրավոր կիլոմետր դժվար ճանապարհ են անցել, ազատել են իրենց ապրանքը գիշատիչ տասնյակ հայացքներից. շրջանցել են բազմաթիվ մաքսատներ ու խորամանկությամբ, ուժով, խելքով ու հմտությամբ հեռավոր Վասպուրականից Անտիոք հասցրել իրենց ապրանքը— տարեխ ձուկը։

---

1 Մ ա տ թ ե ո ս Ո ւ ռ հ ա յ ե ց ի, «Ժամանակագրութիւն», Վաղարշապատ, 1898, էջ 226։

Նրանց այլ ընկերակիցները, նույնպիսի դրժվարություններ հաղթահարելով, գնում էին Պարսկաստանի մարդաշատ քաղաքները, հասնում էին Պարտավ և այլ հեռավոր վայրեր։ Եվ ամենուրեք նրանք, վաճառական լինելով հանդերձ, միևնույն ժամանակ զինված կռվողներ էին, որ պաշտպանում էին իրենց անձն ու շահը։

Պատահակա՞ն է արդյոք 80 կորիճ վաճառականների այսպիսի համագործակցությունը հայրենիքից հեռու։ Միայն անձնական շահն ու օգո՞ւտն է արդյոք, տվյալ դեպքում միավորել նրանց։ Համոզված կարելի է հայտարարել, որ ոչ։ Ոչ թեկուզ այն պատճառով, որ նրանք հանդես են գալիս որպես կեր ու խումի, գինու ու կռվի փորձված ընկերներ, մի ընկերություն, որ չէր կարող ծնվել Անտիոքի նահապարհին։ Եթե նրանք իրար հետ կապ չունեցող անհատներ լինեին, օտար շուկայում նույնիսկ հակադիր շահեր պետք է ունենային, ամեն մեկը պետք է ձգտեր ավելի շուտ վաճառել իր ձուկը և տուն դառնալ։

Վերոհիշյալ հետաքրքրաշարժ դեպքի հանգամանքները պարզելու համար բացառիկ արժեք է ներկայացնում Մատթեոս Ուռհայեցուց մեջ բերած հատվածի «Մանկտաւագ» տերմինը։

«Մանկտաւագը» հանդես է գալիս, որպես բրերով զինված 80 երիտասարդների ղեկավար. նրա կոչով բոլորը կռվի են ելնում։ Զափազանց ուշագրավ այս տերմինը կազմված է «մանկտի» և «աւագ» բառերից։

Մեր բառարաններում («Նոր հայկազեան բառագիրք», Ստ. Մալխասյանի «Հայերեն լեզվի բացատրական բառարան») «մանկտի» բառի արձանագրված իմաստներից են՝ «պատանի», «երիտասարդ», «զինվոր», «քաջ զորական» և այլն։ Ուշագրավ է նաև մանկտի բառի գավառային իմաստներից մեկը, որը համարժեք է «մակարներ» (ամուսնացող երիտասարդի ընկերներ) բառին։ Բացի արձանագրված այս իմաստներից, Հակոբ Կլայեցու (XIII դար) «Մեկնութիւն նուրբ գրեանց» աշխատության մեջ կա մի հատված, ուր այդ «մանկտի» բառը գործ է ածվել երիտասարդ արհեստավոր իմաստով։[1]

«Մանկտի» բառի այս իմաստները, ինչպես և այն որոշակի տվյալները, որոնց համաձայն Սրգնկայի «Եղբայրության» և «ախիս» կազմակերպության անդամների մեծագույն մասը ամուրի երիտասարդներ, այսինքն՝ «մանկտիք» էին, անտարակույս են դարձնում այն, որ Մատթեոս Ուռհայեցու նկարագրած դեպքի մեջ գործող «մանկտաւագը» մեզ արդեն ծանոթ «Եղբայրության» նման ինչ-որ քաղաքային կազմակերպության ղեկավար անձ է, որի հրամանին հլու և կոչին հպատակ գործում են «Եղբայրության» մեջ ընդգրկված «մանուկները», լինի՝ իրենց հայրենի քաղաքում, լինի բուն երկրից անսահման հեռու օտար հորիզոններում։

«Հայկազյան բառագրքի» և մեր մյուս բառարանների հեղինակներին «Մանկտաւագ» տերմինի գործածությամբ միայն մի հատված է հայտնի, և այդ Մ. Ուռհայեցու մեզ արդեն ծանոթ հատվածն է։ Բարեբախտաբար, այդ բառը մեր մատենագրական երկերում գործածվել է նաև հետագայում։ XIV դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններում, օրինակ, «մանկտաւագ» տերմինին հանդիպում ենք երեք անգամ։

1. 1334 թ. Կաֆայում ընդօրինակված Յառընտիրի հիշատակարանում. («[յիշեցէք] Բահատուր բազազին, պարոն Հասրատին, Սիմէոն չրախճուն, մանկտաւագ Կազուրին, պարոն Ավրատին և այլ երախտաւորաց»)։[1]

2. 1343 թ. մի հիշատակարանում («Պատուական ծերունին զԹագվոր մանկտաւագն»)։[2]

3. 1357 թ. Սուլթանիայում, Մխիթար Անեցի գրչի կողմից ընդօրինակված ձեռագրում։ Երբեմն գործակցել է մանկտաւաց Ներսեսը («զրազմավէր ոգի զմանկտաւաց Ներսէս՝ զսակաւ աշխատողս ի սմայ, աղաչեմ միով տէր-ողորմայիւ օգնական լինել»)։[3] Այդ նույն ձեռագրի հիշատակարանում հիշվածների մեծագույն մասը արհեստավորներ են՝ ուսթայ Վրանը, դասապ Նուրազինը, գինեծախ Զաքարէն։

Անտարակույս, այս տերմինին կհանդիպենք նաև հետագա՝ XV—XVII դարերի հիշատակա-

---

1 Այդ հատվածում հեղինակն ասում է, որ դիպակագործությամբ, ոսկեգործությամբ և շքեղ ու թանկարժեք ապրանքներ արտադրող այլ արհեստներով հոգևորականները չպետք է զբաղվեն, «այծէիւք յոստայնանկութեամբ բաւականացուք յոստայնանկական արուեստս», և մի որ մանգանց անարգել մտաց իմացուածք են և նոցին գայթակղութիւն, զի մանկունք փարին ընդ պայծառ արուեստս և այս, որ մանկանց գայթակղութիւն է անընդունելի է մեզ» (Մատենադարան, ձեռագիր № 598, էջ 176ա)։

1 Լ. Խաչիկյան, ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Երևան, 1950, էջ 265։

2 Նույն տեղում, էջ 334։

3 Նույն տեղում, էջ 426։

բաններում և այլ աղբյուրներում։ Այդ նշանակում է, որ «մանկտաւագութիւն» ինստիտուտը, գոյություն ունենալով դեռևս XII դարի սկզբին (1120 թ. մերձավորապես), իր գոյությունը շարունակել է նաև հետագայում։

«Մանկտաւագ» տերմինի հետաքրքրությունը այսքանով չի սպառվում։

XIX—XX դարերի ազգագրական տվյալներով Հայաստանի, Վրաստանի և Թյուրքիայի քաղաքներում արհեստավորական համքարությունների մեջ կար հատուկ պաշտոնյա, որ կոչվում էր «իդիթբաշի» կամ «ջիդիթ-բաշի»։ XIX դարում այդ պաշտոնյայի պարտականությունն էր Ուստա-բաշու կարգադրությունները հաղորդել համքարության անդամներին, ժողովի հրավիրել նրանց և այլն։ Այդ շնչին եկամուտ բերող պաշտոնը սովորաբար հանձնում էին համքարության այն անդամներին, որոնք ժամանակավորապես կամ ընդմիշտ զրկված էին արհեստը բանեցնելու կարողությունից։[2]

Իդիթ-բաշու պարտավորությունների ու պաշտոնի մեջ չկա որևէ բան, որ առնչվի նրա անվան (իգիթ. ջիգիթ—թուրքերեն նշանակում է «ջահել», «բաջա» և այլն) իմաստին։ Նա ստորադաս պաշտոնյա է, ուստի որևէ մեկի հանդեպ «ավագ» (բաշի) չէ. նա չի առնչվում որևէ կերպ նաև «երիտասարդ» ու «բաջա» իմաստներին։

Սակայն այդպես էր XIX դարում, երբ Անդրկովկասում և Թյուրքիայում համքարական կազմակերպությունները, զարգացման դարավոր ընթացք ապրելով, կորցրել էին իրենց կազմակերպչական հին սկզբունքներից շատ-շատերը, երկրի հասարակական ու քաղաքական կյանքում չէին կատարում այնքան կարևոր դեր, ինչպես անում էին նրանց հեռավոր նախորդները XII—XIII դարերում, զինված ուժ իրենցից այլևս չէին ներկայացնում և այլն։ Այս բոլորի հետ մեկտեղ, այնուամենայնիվ, «իդիթ-բաշի» տերմինը (որ հայկական «մանկտաւագ» տերմինի հարազատ թարգմանությունն է), ինչպես նաև «Ագասիկալ», «Ուստաբաշի» և համքարությունների հետ կապված այլ տերմիններ, վկայում են քաղաքային համքարական կազմակերպությունների և միջնադարյան «եղբայրությունների» սերտ կապի և առնչության մասին։

Շարադրված տվյալներով, որքան էլ նրանք սուղ և ակնարկային լինեն, թվում է, թե կարելի է ապացուցված համարել, որ դեռևս XII դարում Հայաստանի քաղաքներում կային կազմակերպություններ, որոնք միավորում էին քաղաքի արհեստավորական և առևտրական շերտերին, կազմակերպում էին պայքար ընդդեմ «բռնավորների», օգնում էին տնտեսապես քայքայված ընկերոջը, զորավիգ էին լինում միմյանց քաղաքական ու տնտեսական գործունեության բոլոր բնագավառներում։ Նրանք միաժամանակ կարևոր դեր էին խաղում՝ որպես զինված ուժ։ Մանկտավագի գլխավորությամբ նրանք հարձակվում էին իրենց թշնամիների վրա, հալածում էին իրենց հարստահարողներին, բռնակալ ֆեոդալներին, իսկ հաճախ նաև, որպես քաղաքի իսկական հայրենասերներ, կրծքով պաշտպանում էին այն օտար նվաճողների հարձակումներից։ Այդպես, օրինակ, հայտնի է, որ 1243 թ., երբ մոնղոլները Բաշու Նոյինի գլխավորությամբ պաշարեցին Երզնկան, «Բնակիչք քաղաքին բազում հարուածս հասուցեալ ի վերայ զօրացն թաթարին...»։[1]

Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում Հայաստանի բոլոր քաղաքներն են արդյոք ունեցել այդպիսի կազմակերպություններ։ Վճռական պատասխան տալ այս հարցին չենք կարող։ Թվում է սակայն, որ այն խոշոր քաղաքները, որոնք կարևոր դեր են կատարել որպես արհեստագործության և միջազգային առևտրի կենտրոններ՝ պետք է որ ունեցան այդպիսի կազմակերպություններ։

Մեզ արդեն հայտնի է, որ Երզնկան և Վասպուրականի քաղաքներից մեկը (համենայն դեպս Վանը) ունեցել են նման կազմակերպություններ։

Երզնկայի «Եղբայրության» «Սահմանների» մեջ կա հետևյալ ուշադրավ հատվածը։

«Իսկ երրորդ գլուխն այն է, որ և այլոց բարի արասցեն, որ գան ի հեռաւոր աշխարհաց և կամ ի սոցանէ գնան յայլ աշխարհ՝ օգտին և օգտեցուցանեն»։

Հատվածի բովանդակությունն այն է, որ «եղբայրները» պարտավոր են այլ վայրերից եկողներին բարություն անել (հյուրընկալել, կերակրել և այլն), որպեսզի իրենք ևս փոխադարձաբար հյուրընկալվեն ուրիշ երկրներ գնալու դեպքում։ Այս հատվածը չի կարելի դիտել սոսկ որպես արտահայտություն քաղաքային կազմակերպությունների «հյուրասիրու-

1 «Մանկտաւագ» բառը գործածվել է նաև որպես անձնանուն։ Հ. Աճառյանը (տես՝ «Հայոց անձնանունների բառարան», հտ. Գ., էջ 203), գտնում է, որ այն կազմված է «մանկտի» և «աւագ» հայերեն բառերից և ունի «մանուկների ավագ, ուսուցիչ կամ վարժապետ» իմաստները։

2 Ю. Ахвердов, Тифлисские амкары, Тифлис, 1887, стр. 17 и др.

1 Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Թիֆլիզ, 1909, էջ 268։

թյան։ Ոտար-հեռավոր երկրների հետ կապ ունեցող և հեռավոր բաղաքներում հյուրընկալություն ակնկալող բաղաքացիները, անշուշտ, առևտրականներ էին, որոնք անդավաճան իրենց «առս և ստուրբ»-ի սկզբունքին, «օգուտ էին տալիս այլոց՝ «օգուտս ստանալու ակնկալությամբ միայն («օգտին և օգտեցուցանենք»)։

Այստեղից կարելի է, թերևս, եզրակացնել, որ նման «եղբայրություններ» գոյություն են ունեցել Հայաստանի և շրջակա երկրների այլ վաճառաշահ քաղաքներում նույնպես։ Կարծում ենք, որ միջնադարյան Հայաստանի մայրաքաղաք Անիի վերաբերյալ ունենք փոքր ինչ ավելի որոշակի տվյալ։

Ինչպես արդեն ասիք ենք ունեցել, նշելու Երզնկայի Եղբայրության «գլուխ» 1280 թվին կարգվում է Գրիգոր Սանահնեցի անունով մի ծերունի վարդապետ։ Այդ Գրիգոր վարդապետը, ամենայն հավանականությամբ Երզնկայում հաստատված հենց այն գրասեր Ահարոն-Գրիգոր վարդապետն է, որն ընդօրինակել է ավել Երզնկայի Եղբայրության «Մահմանքի» մեզ հայտնի հնագույն ձեռագիրը (№ 2329)։ Այդ ձեռագրի 281ա—283ա էջերի ինքնագիր հիշատակարանում, ձեռագրի ստացող այդ Գրիգորը գրում է.

«Ի թուականին՝ ՉԽ (1291)... նուաստ և անարժան սպասաւորս բանի Ահարոն մականուն Գրիգոր կոչեցեալ ստացա զգիրքս զայս, որ է Փերական և Արուեստ գրադարձի և Համառաւտ կանոնք՝ երկու դիտավորութեամբ. մի, զի ընթերցեալ աւգտեցայց ի սմանէ, վասն որոյ և խոշորագիծ նտու գրել ի թերութեան ժամանակի, և երկրորդ, զի յիշելոյ պատհառ լիցի մեզ յետ վճարելոյ մեզ ի մարմնաւոր կենացս...»[1]

Այս նույն ձեռագրի մեջ հետագայում արված երկու հիշատակությունների համաձայն (էջ 1ր, և 283ա) այս Գրիգոր-Ահարոն վարդապետը վախճանվել է 1316 թ. օգոստոսի 18-ին։ Սակայն խաղաղ չի անցել Երզնկայում նրա կյանքը այդ մեկ քառորդ դարի (1291—1316 թվերի) ընթացքում։

Նրան պատկանող մի այլ ձեռագրի ինքնագիր հիշատակարանից (ձեռագիր № 1342, Մեկնութիւն Ղուկասու յիգնատիոսէ») տեղեկանում ենք, որ այն գրվել է.

«Ի մայրաքաղաքն Երզնկս, բայց ի կոտարումն ոչ ել, զի այլազգիք մահմեդականք ասպատակեցին ի գաւառն, ի քառասներորդաց պահոցն յերկրորդ շաբաթուն, և բազում քրիստոնեայս՝ եկեղեցականս և աշխարհականս նահատակեցին և յանխնա և անողորմ սրակոտոր արարին և զայլսն գերի վարեցին և սատիկ և անհնարին ահ և երկեղ և տագնապ և խուովութիւն եղև բնակչաց քաղաքին։ Եւ որպէս յոլով ցրուեցան ի քաղաքացեացն ընդ ամենայն կողմանս, նույնպէս և մեք մազապուրծ եղեալ բազում տառապանաւք և աշխատութեամբ դիմեալ յԱրևելից կողմն։ Խնամք ողորմութեանն աստուծոյ առաջնորդել հասուց զմեզ յԱնի քաղաքս. և աստ եղև կատարումն գրոցս, տնորհաւք և աւգնականութեամբն աստուծոյ, ի թուականիս հայոց ՉԽԱ (1292), ի մարերի Ժ (10) և ի հոկտեմբերի ԺԴ (13), ձեռամբ մեղապարտ և անարժան վարդապետի Ահարոնի՝ մականուն Գրիգոր կոչեցեալ»։[1]

Անի քաղաքում նրան հյուրընկալում են և խնամում Գրիգոր ծեր քահանան, Սիմեոն միայնակեց Մարբեղունեցին և ուրիշներ։ Երախտագիտությամբ է հիշում նա իրեն հանդեպ «գութ և ողորմութիւն» ցույց տված անձանց։

Հակված ենք կարծելու, որ Երզնկայի 1292 թ. աղետից փրկված Գրիգոր-Ահարոն վարդապետը Անիում հեշտությամբ գտնում էր թե օթևան, թե «խնամք ու գթութիւն», թե գիրք ու մտերմություն, որովհետև Անի քաղաքում ևս կար Երզնկայի «Եղբայրություն» կազմակերպության նման մի կազմակերպություն, որի անդամների պարտավորությունների մեջ են հյուրընկալությունն ու օտարականի պատվելը առաջին տեղերից էր գրավում։

* * *

Այժմ աշխատենք առկա սուղ փաստերի միջոցով առաջ քաշել Երզնկայի «Եղբայրության» և ընդհանրապես քաղաքային պլերսի դաղափարախոսությանը առնչվող մի երկու հարց։

Ինչպես արդեն տեսանք XII—XIII դարերի Հայաստանի քաղաքներում դասակարգային հակամարտությունները սրվում են ծայր աստիճանի։ Փողի ուժով տնտեսական ու քաղաքական կյանքի հրամանատարական բարձունքները նվաճող մեծահարուստ ու փարթամ վաճառականները, որոնք պարծենում էին ոչ թե իրենց տոհմի ազնվականությամբ ու հին անցյալով, այլ իրենց հսկայական նյութական մի-

1 Մատենադարան, ձեռագիր № 2329, էջ 282ա։

1 Մատենադարան, ձեռագիր № 1342, էջ 260ա—160բ։

2 Այս շրջանի «Հերձվածողական» գաղափարների մասին մենք արդեն ասիք ենք ունեցել խոսելու «Աղանդավորական գաղափարախոսությունը Հայաստանում XII—XIV դարերում» հոդվածում (տես Ն. Մառի անվան կաբինետի «Աշխատություններ», 1947 թ., № 2, էջ 181—209)։ Այժմ ձեռքի տակ ունենք նոր նյութեր։

ջոցներով, բնական է, որ պետք է պայքարեին երկրի ֆեոդալ իշխողների և նրանց կամակատարների՝ եկեղեցականների դեմ։

Այս պայքարի արդյունքը լինում էր այն, որ շատ մեծատուն վաճառականներ դրամի սմենակարող ուժով ձեռք էին բերում կալվածքներ, իսկ այդ կալվածքների հին տերերը, աստիճանաբար կորցնելով իրենց ունեցվածքը՝ զրկվում էին անաշխատ ու շռայլ կյանք վարելու իրենց նախկին հնարավորություններից։

Մեծատուն վաճառականների և նրանց գաղափարախոսների համար գաղտնիք չէր, որ եկեղեցու հովանու տակ էին պատսպարվում և զգեստավորված շարունակում տիրել իրենց հրսկայական կալվածքներին հայ ֆեոդալական ընտանիքների նվազ ու վտիտ շառավիղները։ Եկեղեցին աշխատում էր հնարավոր բոլոր միջոցներով կաշկանդել առևտրականության «ազատ» ու համարձակ գործունեությունը, հատկապես այդ գործունեության այն կողմը, որն ուղղված էր ֆեոդալական տնտեսական հարաբերությունների դեմ։

Տնտեսական ու սոցիալական այս հողի վրա քաղաքներում հանդես են գալիս մարդիկ, որոնք.

«Բամբասեն իսկ (զվարդապետս)՝ ագահս և հեշտասէրս և իշամեղուս անուանեն զնոսա և դատարկակեաց, և որ ինչ սոցին նման են։»

Վարդապետներին և ընդհանրապես հոգևորականությանը իշամեղու, ագահ ու հեշտասեր անվանողները, բնական է, որ պետք է թերանային հավատի հարցերում և հակադրվեին եկեղեցու իդեոլոգիային։

Եվ իրոք, եկեղեցի հաճախելը դառնում է մի ծանր պարտականություն, որ միայն կեղծ բարեպաշտություն ցույց տալու նպատակով երբեմն-երբեմն կատարում էին առևտրական դասի ներկայացուցիչները։

1371 թ. մի հոգևորական վկայում է այն մասին, որ ինքը ծանոթ է 15-ամյա մի պատանու, որը դեռևս եկեղեցի չի մտել և պատարագ չի տեսել, և մի ուրիշի, որը 10 տարուց ավելի է, ինչ չի հաղորդվել։

«Եկեղեցի,— գրում է նույն հեղինակը,— սարդի ոստմամբ լցեալ, զգեստ փոշակալեալ և ցեցակերեալ կամ բնաւ անզարդեալ, հաղորդութիւն խորհրդոյն բորբոսքն եղեալ կամ ի մկանց ծախեցեալ, քահանայք և առաջնորդք գայթակղեցուցանեն և ոչ շինեն զհաւատս։»[1]

Քաղաքային իշխող շերտերը, այնուամենայնիվ իրենց կապերը չէին խզում եկեղեցուց։ Ընդհակառակը, XII—XIV դարերում նրանք էին հիմնականում, որ կառուցել էին տալիս ու վերաշինում եկեղեցիներ ու վանքեր։ Նրանք բավարարվում էին, որ եկեղեցին իրենց պետք է գալու, որովհետև և՛ եկեղեցու և՛ մեծատունների դեմ ծառանում էին հասարակության աշխատավոր ու չքավոր այն շերտերը, որոնց մտահոգում է այն հարցը, թե՝

«Վասն է՞ր շարքն ի հանգիստ կան և մեծատունք են և փափկանան միշտ և յուրախութեան են յանապազ և մեք՝ կարաւտ ամենայն բարեաց»։-

«Չարերիս» շարքում այդ «կարոտ ամենայն բարեաց» շերտերը դնում են բոլոր նրանց, ովքեր «փափկանան միշտ և յուրախութիւն են» այսինքն և՛ հոգևոր և՛ աշխարհիկ տերերին։

Այդ շերտերը հասել էին արդեն այն գիտակցությանը, որ աստված բոլոր մարդկանց ստեղծել է «զոյգ և հավասար» միևնույն իրավունքներով՝ իշխել գազանների, սողունների, թռչունների ու ձկների վրա։ Ուստի և տիրոջ և ճորտ գյուղացու, մեծահարուստ վաճառականի և աղքատ քաղաքացու փոխհարաբերությունները ստեղծվել են հետագայում՝ բռնության ճանապարհով։

«Տիրելն այսու եղանակաւ գործեցեալ էգն ի սկզբանէ, զի հզօրքն և կարողքն բռնացան ի վերայ տկարացն և հնազանդեցուցին զնոսա ի ընչեղքն և հարուստքն ծառայեցուցին ինքեանց զաղքատքն։»[2]

Եկեղեցին տիրող դասակարգերի կողմից պատվեր ուներ միշտ քաղաքական պասսիվության ու ծառայական հնազանդության մեջ պահելու աշխատավոր ժողովրդին։ Այս նպատակով, այն ամենը, ինչ կարող էր աշխատավոր ժողովրդի սրտում արթնացնել սեր դեպի կյանքը, մղել նրան պայքարի ընդդեմ բռնության ու անարդարացի սոցիալ-տնտեսական հարաբերությունների՝ եկեղեցին հայտարարում էր սատանայի գործունեության ու ազդեցության արդյունք։

Եկեղեցու իդեոլոգները քարոզում էին, թե սատանան մարդկանց կորուստի մատնելու համար բազմաթիվ հնարներ գիտե.

«Զոմանս (խաբէ սատանայ) թատերուք

---

1 Սարգիս Շնորհալի, Մեկնութիւն եօթանց թղթոց կաթողիկոսայց, Կ. Պոլիս, 1826, էջ 54։

2 Մատենադարան, ձեռագիր № 581, էջ 255բ—256բ։

1 Բարսեղ Մաշկևորցի, Մեկնութիւն սրբոյ աւետարանին, որ ըստ Մարկոսի, Կ. Պոլիս, 1826։

2 Նույն տեղ, էջ 103—104 (տես՝ նաև Մատենադարան, ձեռագիր № 1314, էջ 64բ—65ա)։

խաղուց և շարաշար ծաղրօք և լկտի կատականօք, դատարկ և վայրապար խաւաւք, զբաշաց զրոյցն տալ տայ և ուսուցանել զմարդն զաւրաւոր մանուկ և յաղթող լինել, և այն է կորուստ ի կռիւ կամ ի խաղ փութացուցանէ և ի սպանութիւն...»[1]

Ժողովրդին իր «բաշաց զրույցներից», իր սիրելի գուսանների ու վարձակների երգից ու տաղից, առածից ու հանելուկից կտրելու, հեռացնելու նպատակով եկեղեցու իդեոլոգները բազմապիսի հնարների էին դիմում։ Ներսես Շնորհալին ժողովրդական հանելուկների նմանողությամբ կրոնական բովանդակությամբ հանելուկներ էր հորինում, «զի փոխանակ առասպելաց՝ զայն ասասցեն ի գինարբուս և ի հարսանիսս»[2]

Մխիթար Դոշն ու Վարդան Այգեկցին օգտագործում էին ժողովրդական կենսախինդ ու աննողջ առակները՝ մեկնաբանելով և նրանց մեջ դնելով այլ՝ ժողովրդին խորթ գաղափարախոսություն։

Սակայն աշխատավոր ժողովուրդը սնվում էր իր ստեղծագործական վճիտ աղբյուրներից, երգում էր իր հայրենները, լսում իր ծոցից դուրս եկած գուսաններին ու ասացողներին, չանսալով ու արհամարհելով եկեղեցականների կողմից դրված արգելքն ու անեծքը՝ շտապում էր դիտելու թատերական ներկայացումներ և այլն։

Մեր մատենադարանի ձեռագրերում կա խաչին նվիրված մի հետաքրքիր ներբողյան, որի մեջ գտնում ենք ուշագրավ հետևյալ տողերը.

«Յորժամ զանազան թատերք մոլորութեանցն ի փողոցս քաղաքացն հրևութանան յօրինեալք, յայնժամ է տեսանել զխտութիւն մարդկան կատարեալ ձգիլ զանձինս առ տեսարանն վնասակար ոգւոցն... բազումք զվաճառաշահութիւնսն արհամարհելով անգ երթալ դեգերին, այլք զարուեստս ձեռագրութեանն անփոյթ արարեալ զօրն ամենայն նստին դատարկացեալք՝ լսել վնասակար հնչմանցն ձայն, որք զհոգւոցն գործեն զապականութիւն։ Իսկ յորժամ իցէ ժամանակ լսելութեան աստուածային ինչ շահաւոր պատմութեանց՝ տազտկացեալք հրաժարին և տարտամեալք հեղգալով ի բաց դարձուցանեն զլսելիս...»[3]

Այս և նման այլ վկայություններից պարզ է դառնում, որ քաղաքային աշխատավոր շերտերն ունեին իրենց կենսաթրթիռ կուլտուրան, իրենց թատրոնը, գուսաններին և գաղափարախոսներին։

Երզնկայի «եղբայրության» հետ գրական բեղմնավոր գործունեությամբ և անձնական կապերով անմիջապես առնչվում է XIII—XIV դարերի նշանավոր բանաստեղծ Կոստանդին Երզնկացին։

Երզնկացին իր մի շարք տաղերում ակնարկներ է անում այն հալածանքների ու զրկանքների մասին, որ կրել է ինքը կղերականներից ստեղծագործելու համար՝ ընդհանրապես և «աշխարհի» և «սիրոյ» բան ստեղծագործելու համար՝ մասնավորապես։ Օրինակ, մի տեղ նա գրում է.

«Ոմանք չարախօսեն զինէն վասն նախանձու,
Թէ որպէս խօսի սա այսպիսի բան, զի վարդապետի չ՚ աշակերտել...»[1]

կամ

«Ոմանք չար են հետ ինձ
Ու նախանձով են յիմ վերայ
Վասն իմ գրբեալ բանիս,
Որ առ մարդիկ երեւանայ...»[2]

և կամ

«Նայ կէսք մ՚ասեն գայ է
Յիմար ու խեւ մաղաս կարթել.
Ու կէսք ս՚ասեն թէ պարտ է
Զայսպիսոյ արիւնն հեղել.
Նայ ես պատասխանեմ
Թէ՝ Կոստանդին, չէ պարտ լրսել...»[3]

Բայց ոչ բոլոր տեղերումն է Կոստանդինը գանգատվում իրեն նախանձողներից ու հալածողներից։ Ընդհակառակը, «Տաղ սիրոյ»-ի մեջ, ուր գովերգում է «գեղեցիկ մորճինս», որի նմանը ոչ ոք դեռ չի տեսել, նա հայտնում է.

«..Եղբարք մի կան հետ մեզ սիրով.
Աշխարհի բան ուզեն գրով.
Նայ ես վասն այն յայտնի ձայնով
Սիրու բաներս ասցի յոլով»[4]

Ովքե՞ր են այդ «եղբայրները», որոնք Կոստանդինից «աշխարհի բաներ» են ուզել, ովքե՞ր են, որոնք սիրել ու տարածել են նրա «սիրու բաները»։ Կոստանդինի «քերթուածներին» հրատարակիչ Պոտուրյանը, իրավացիորեն նկատում

1 Ձեռագիր № 2776, էջ 252բ։

2 Կիրակոսի Գանձակեցւոյ, Հայոց Պատմութիւն, Վենետիկ, 1865, էջ 69։

3 Ձեռագիր № 1880, էջ 355ա։

1 Կոստանդին Երզնկացի, ԺԴ դարու ժողովրդական բանաստեղծ և իր քերթուածները, հրտ. Մ. Պոտուրյան, Վենետիկ, 1905, էջ 57։

2 Նույն տեղում, էջ 97։

3 Նույն տեղում, էջ 109։

4 Նույն տեղում, էջ 171։

է, որ այս տաղի մեջ նշված «Եղբայրքը» կրոնավորք չէին անշուշտ, բայց ովքեր էին, այդ հարցը նա թողնում է անպատասխան։ Հնարավոր է, որ Կոստանդին Երզնկացու պատվիրատու «Եղբայրքը» Երզնկայի մեզ արդեն ծանոթ միաբանության «Եղբարքն» լիններ։

Այս հավանական եզրակացությունը հիմնավորվում է հետևյալ փաստով։

Կոստանդին Երզնկացին ունի «Բան Կոստանդեայ առ մեր հոգեւոր եղբայրն Ամիր. հոգով ի հոգի և սրտէ ի սիրտ» խորագրով մի բանաստեղծություն, որն սկսվում է հետևյալ տողերով.

«Պարոն Ամիր, մեր պարծանաց
Եղբայր և սիրելի...»[1]

Այստեղից պարզ է, որ Կոստանդնի «հոգեւոր եղբայր» Ամիրը աշխարհական մարդ է («պարոն»)։ Այդ նույն պարոն Ամիրն է (Փոլին Քալայմաչի մականունով), որ 1336 թ. Թավրեժում ընդօրինակել է Կոստանդնի տաղերի մեզ հասած հնագույն ժողովածուն։

Երզնկա—Թավրեժ վաճառաշահ ճանապարհով անցնող ու դարձող «պարոն Ամիրները» հենց այն «եղբայրներն» էին, որոնց համար Հովհան Երզնկացին 1280 թ. կազմեց «Կանոնք և Սահմանքը»։ Դրանց խնդրանքով էր, որ Կոստանդին Երզնկացին գրեց իր «աշխարհի» և «սիրու» գողտրիկ տաղերը։

Կարծում ենք, որ Կոստանդինը չի բավարարվել Երզնկայի «Եղբայրների» պատվերով մի քանի սիրո երգեր հորինելով։ Նրա ստեղծագործությունների մտայնությունն ու նպատակադրումն ըստինքյան տոգորված է բաղաքային պլեբսի կաղափարներով ու մտորումներով։

Լ. ԽԱՉԻԿՅԱՆ

---

1 Կոստանդին Երզնկացի, ԺԴ դարու ժողովրդական բանաստեղծ և իր քերթուածները, հրատ. Մ. Պոտուրյան, Վենետիկ, 1905, էջ 153։